

Պ Ե Յ Մ Ա Ն Բ

Երեզան 10 օրը անգամ մը կը
հրատարակուի:
Տարեկան գինն է 1 1/2 մէճիտ
Մէկ թերթը 50 փարայ.
Բաժանորդագրութիւնը տար-
ւոյն սկիզբէն է.
Իւրաքանչիւր թիւը ճամբու
ծախքը անողին վրայ է:
Անվճար նամակը կը մերժուի:
Հանդիսիս վերաբերեալ նա-
մակ կամ գրութիւն, պէտք է
ուղղել առ Խմբագիր:



ՀԱՐՑԱԿԱՆ ՈՐԹՈՒՆԷ՛՛՛՛

Կ. Փօլիք, Արմինեան տպարան,
Ատարազար, Պ. Սալանորեան,
Սամսոն Օհանէս Եղիսէրեան,
Տրապիզոն, Հ. Գ. Սարրեան,
Էրիզա, Պ. Սիմօն Մ. Կաշա-
տուրեան.
Նիկոմիդիա, Ռուբէն Կ. Դա-
պասագլեան.
Ջփուզէ/ու, Յ. Տէտէեան.
Կարին, Կ Պատ. Չաքարեան.
Վան, Պ. Գրիգոր Դաւթեան
Մուշ, Աւետիս Փոմիկեան.

Է Ր Ի Չ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երբ կ'ոգնես գիտնալ թէ աշխարհիս ազգաց մեծեկն հրն է ամենեկն շու-
աւորեալն ու հարուստը. հարցուր թէ հր ազգն աւելի ընթերցասէր է
կամ հր ազգն աւելի բուշր կը գործածէ:

Թիւ 8. Ապրիլ. 1

ԲՈՎԼՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային. — Թին Հայաստանեայց. — Հաջակուն Դամա-
կանի. — Ատարազարեան Դամակ մը. — Այցելու Յաւերակա
Հայրենեաց Դամբանական տաղերգութիւն:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Անաւասիկ գատիկն անցաւ, ամէն մարդ իւր բա-
րեկաւին ձեռքը սեղմելով վայրկեան մը խնդաց,
ուամիկը իւր դաշնակի ձայնովը զմայլեցաւ շրամիտ
գինեմուրը, իւր շոայլութեան վրայ ուրախացաւ. ա-
մէն տուն կղերականաց օրհնութեամբ պայծառացաւ
ու քահանայից զրպաններն ալ ոսկի մետաղներով լեց-
ուեցան, սակայն այսօր ամէն բան իւր առջի կերպա-
րանքից տակ սկսաւ բողբոլակոյլ. ամէն մարդ իւր
զբաղմանցը պարապիլ. որովհետեւ, խնդութեան, զեղ-
խութեան և շոայլութեան օրերը անցան. . . վերջա-
պէս ամէն անձ ասոնց բոլորն ալ պարզ տեսաւ.

բայց ինչ օգուտ որ Պատրիարքարանի. Հիւանդա-
նոցի և նորեկ Սահմանադրութեան վրայ ամենեկին
տեղեկութիւն մը չ'ստացաւ. ամեն Հայ. այս օրերս
սկսաւ կրկին իւր ակնարկը Պատրիարքարանի վը-
րայ դարձնելով ակնգէտ դիտել այն վերաբնեալ
Սահմանադրութեան տեսութիւն, ուր երկու տա-
րիներէ ի վեր Թախտականի մը նման հեռի կը զըտ-
նուէր Հայկական ծոցէն:

Այս տեսութիւնը զորս ուժը տարիներէ ի վեր հիւ-
րաբար Հայկական հօրիզոնի վրայ կը սաւառնէր.
տարաբաղդի մը նման մերթ հողմերու և մեքը դառ-
նաշունչ քամիներու հանդիպելով ասդին անդին կը
ծփար. . . Երջանիկ բաղդ. հիմա որ քիչ մը հանգիստ
գտներու համար եկաւ Պատրիարքարան հապաւ-
ղօքաղութար. երբեմն օդոյն տեղեկութիւնը. իսկ
երբեմն ալ օդոյն զմայլելի գեղեցկութիւնը Ազգային
Մեծապատիւ երեսփոխան էֆէնտիներուն ձանձ-
րոյթ մը պատճառելով չը կարացին յաջողական
կերպով իրենց պատկառելի ատեանին նիստը շա-

րունակել . Անշուշտ նախախնամական մատ մը ըլլալու է վերոյիշեալ տետրակի հեղինակին գրիչը երեքցունողը ող, Հայուն կրած այսչափ աղէտալի տառապանաց գէթ վերջմը չը տալու համար . անգամ մը օդոյն անձրևոտ լինելուն . անգամ մը գեղեցիկ և պարզ լինելուն պատճառաւ . չը թողուց բարեպատեն առիթ մը Մեծապատիւ երեսփոխան է-ֆէնտիններուն . որով կարենան իրենց պատկառելի և ակնկալու նիստը զուամարել :

Սակայն ինչ յանձանք կայ նախախնամութեան . ինչու համար Պատրիարքարանը բարեպատեն առիթներու մէջ անդամալուծի մը նման տանդաղ կը շարժի . ինչու համար Ազգին վրայ ծանրացեալ ժանտախտի լուծը գէթ թեթևցնելու վայրկեան մը սնափ չիգար . ինչու համար . դատարկութեամբ օղը կամ անձրևը զատնառ բռնելով Համարակուծեան սիրտը կտոր կտոր կը բզբտէ :

Պատրիարքարան Պատրիարքարան , արդեօք ինչուան , Երբ խեղճ Հայր ձեռք զառամեղ ձեռքերու տակ ստրկացեալ պիտի շրջագայի . ինչուան Երբ Սահմանադրութիւնը ողորմելի անկողնոյ մը մէջ իւր վէրքերովը անդարման պիտի խրոխտայ , ինչուան Երբ Կաթողիկոսական և Հայրապետական աթոռները թափուր և անտերունջ պիտի մնայ . ինչուան Երբ Կաթողիկոս մը մարդասպան . սակայն անպատիժ Ազգին պատուոյն դէմ պիտի մաքառի . ինչուան Երբ եկեղեցական էֆէնտիններուն անպատուութիւնը Ազգին մէջ ճհիններու նման պիտի վիստայ . ինչուան Երբ զառաւաբնակ առաջնորդները Վասականման Հայկայ սերնդեանը անմեղ արիւնը ծծելէ չը պիտի յագին . ինչուան Երբ . տեղոյս Բերայի ինքնահաւան բահանայք . Արժանապատիւ Խորէն Եպիսկոպոսի պամիւր արձատուորելու համար . անհրմն և անձկարագրելի զրպարտութեամբ քարէ ի քար զարնուելով , Թունաւոր լեզունին իծական կատաղութեամբ ողջամիտ հասարակութեան սիրտը խաթելու համար բոլորովին պիտի խայտառակուին . ու կրկին անգամ անվճիռ պիտի մնան . ինչուան Երբ Ազգային Հիւանդանոցը այսպիսի խեղճ վիճակի մէջ պիտի մնայ . ինչուան Երբ Պատրիարքարանը

Փրկչի պատսպարելի ողորմելեաց հացովը պիտի ապրի և ինչուան երբ . . . ան Պատրիարքարան արդեօք Երբ զուծդ ազգիս ողորմելի վիճակին վրայ պիտի շարժի . . . Ազգասէր մը ի Սիպերիայ . Խրմբագիր մը ի դատաստան . անմեղ մը ի բանտ . ինչ կը նշանակեն ասոնք . Արդարութիւն իրաւունք . . . ան և որպիսի հակասութիւն :

Ուրեմն ուր՝ և որ կողմը կը մնայ մեր Սահմանադրական ազատութիւնը . հաւասարութիւնն ու եղբայրութիւնները , ոչ թէ ասոնք չոր օդաբանութիւններ են մեզի համար . . . տես Պօլսեցի Հայ Պատրիարքարանի այս անտարբեր վիճակը . կարդայ և վայրկեան մը տրտմէ նաևս դու զառաւաբնակ Հայ , մեր այս մէկ քանի տողերը . սակայն պահ մը վերջը կրկին անգամ ինքզինքդ անշարժութեան վեհը խորասուզէ .

— Նիկոմիդիայէն կողմն գրուած արժանահաւատ նամակագրութիւնները մեզ զարմացմամբ կիմաջնեն , տեղոյն երկսեռ հիպոթոցներու աղետալի վիճակի մը մէջ գտնուելը . նաևս Հայ մանկտոյն անվարժ յետադիմութեան դիրքի մը մէջ ըլլալը . զարմանողի տեսարան , կը ցաւիմք երբ կը լսեմք Նիկոմիդացւոյն իւր միակ դատարարակութեան ատենանին շառաջադիմութեանը վրայ անհոգ գտնուելը . ինչպէս որ աշխարհիս մէջ ամէն ձախորդութիւն պատճառ մը ունի , նոյնպէս ալ մեր ևս չէք մոռնար ըսելու թէ Նիկոմիդացւոյն այս հետադիմութիւնն ալ տեղոյն զառամեալ իշխանաց անկրթութիւնն զած է . վասն զի որչափ որ Երիտասարդութիւնը կը ջանայ Հայ մանկտոյն դատարարակութեանը . յայնչափ ալ բռնակալ իշխան աղաները կը ջանան վարժարաններու յետադիմութեանը . սակայն ալ ինչ կուզէ բռնաւոր Հայը թող ընէ . որչափ որ կուզէ թող սոնքաւ անցնու այն խաւարային գարերն ու տարիները կտորեցաւ և փշրեցաւ բառնակալաց ամուր շղթաները և այլ ևս նորոգուելոս յոյս մը չմնաց . ուրեմն Ատաբազարցի բնակչացը նման . Թող զմայլի Նիկոմիդիացի Հայն ալ . Թող հետեւի այսուհետեւ զառամեալը՝ Երիտասարդութեան . Թող լսէ զառաւ

մեալ Հայուն ականջները . երիտադարձական աշխոյժ եռանդն ու ազգասիրական ոգին :

Նիկոմիդիացի Հայր, նախանձելի է ձեզի Ազգաբազարի սակաւամիւ Հայ մանկոյն դաստիարակութիւնը . ձեր բազմամիւ բնակչացը առաջ, այսպիսի յետադիմութիւն մը ամօժ և նախատինք է ձեզի համար . ջանադիր եղիք գլխին ամենայն կերպով յառաջադիմական լուսավառ ասպարեզին վրայ տեղ մը բռնելու . որպէս զի ասպարային մէջ աշխարհի լուսաւորութեան մէյմէկ առաքինի հրեշտակներ կոչուիք . եթէ ոչ, պատրաստէ Հայաստանի Հայուն ձեռացը մէջ այնպիսի կնիք մը՝ որ ձեր ճակտին գրոշմելով . զձեզ վատ և օտարի զաւակ պիտի գոչէ :

ՈՊԻՆ ՀԱՅՈՍՏԱՆԵԱՅՅ

Իմ Հայրենիաց սիրանըկար,
Հօրիգոնն է մրբագներ .

Ուր բնութեան հրաւազեղ,
Զգնալ տեսիլն է հոգարկուեք .

Եւ ուր դաւաճաց հովչաց լեռին,
Դալարն ու վարդ են դառամեր .

Եւ առուսկաց հեղաւահիկ,
Քաղցր կարկաչրն է ճարբեր .

Թէպէտ հոգւոյս քաղցր յոյսեր,
Իմ սրտիս մէջ դեռ չեն ցամբեր :

Ուր սոխակին ճրուղաւաց,
Անուտ դայլայլըն է լոեր .

Եւ գեփիւռին քաղցր բուռում,
Զովազդեցիկ ալ չը փչեր .

Ուր լուսնիկին շող ոսկեփայլ,
Զըզնադագեղ փափուկ կուսին .

Որոց մէն մի զուարթ ծայէն,
Զը բափանցեր ալ ինձ հեռօքն .

Թէպէտ հոգւոյս յուսոյ աստղեր,
Իմ սրտիս մէջ դեռ չեն մարեր :

Թէ սառնապատ լեռանց վրայէն,
Ուր արձագանք սան ձեզ հողմեր .

Նոքա յառաջք են հայրենեաց ,

Նոքա քախիծք են Հայկազանց .

Թէ եփրասայ պղտոր ափունք ,

Փրփրալով մինչ բաւալին .

Նոքա Հայոց են արձասուք ,

Նոքա ցաւոց են զգացմունք .

Թէպէտ արսունք եւ հառաչանք ,

Հագւոյս իղծերը դեռ չեն ցամբած :

Թէ առուակաց ջրեր լեղի ,

Կարմրաներկ առնեն պսոյս ,

Նոքա Հայոց են արիւններ ,

Նոքա վառեն հոգւոյս իղծեր .

Թէ ամայի դաւաճ ու անտաք ,

Սեւ հողերով են ծածկուած .

Նոքա քաղցր են գերեզմանք ,

Ուր փուռ տաւաք են արդ ցանուած .

Փուռն ու Յասսակէ չէ , չեն խղիւր ,

Սրտիս մէջի չգնալ յոյսեր :

Թ'աւերակաց մէջ արդ քաղուած ,

Հայաստանիս գիւղ աւաններ .

Եւ թէ փոց մէջ ծածկուած ,

Հեզ մրշակին անքեր արտեր .

Որոց ամենքն նուիրական ,

Սուրբ արիւնով են թողոյիւած .

Որոց ամենքն վեհ Հայերու ,

Առաւելայ են դառն արտաւազ :

Թէպէտ թրիւռ աւերակներ ,

Բոցավառեն հոգւոյս իղծեր :

Բայց չէ Հայեր , մի լայն ի սուգ ,

Զի Աստուծոյն ազատեցեանս :

Վրիժառու քոյրք իրաւանց ,

Փրփրէ սուրբ բռնաւորաց :

Օն եւ փերենք մեր շրթաներ ,

Տգիտութեան քանձքրամած .

Զի լոյս գոչէ համայն աշխարհ ,

Լոյսն է Փրկիչ անկեալ ազգաց :

Տեսէք , երկինք հաւաք են բնակեղ ,

Յառաջ ի վրեժ տգիտութեան :

Արի՛ որդիք Հայաստանի ,

Յարդարել մեզ նոր ապագայ :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ Յ.Ս.ՄԱՍԻՍԱՆԻ

Էրիզա 20 Մարտ 1868.

Ազնիւ Էրիզա

Երբ Պ. Վաղարշ արագածունի թռչնիկի մը նման աչքիս առաջէն կանխեցեալ, ես ալ իսկոյն քայլերս դէպ ի բնականաբար ուղղեցի այն մոտք, որպէս զի քիչ մը անդորրութիւն գտնեմ. և անհաճախ ժամ մը չանցած յանկարծ իսկանչիս զղրղման որոտում մը հասաւ չը հասաւ, սարսափմամբ անկողնէս դուրս ցատկելով ցնորեալի մը նման կանկ առի. ու իսկոյն լեռնապատառ դրան ետեւը վազելով պահուրտեցայ. քանի զնաց սկսաւ դռան զղրղիւնը սաստկանալ, ու պիտի ըլլի. Երբեք այս անձը ըսի որ այսպիսի տարածամ վայրկեանի մը մէջ ճիւղաղբական հարուածով մը սիրտս կը խորովէ:

Այսպիսի սարսափման մը մէջ վարանած վայրկեանիս դրացի տան ժամացոյցը հազիւ թէ կէս գիշերը կաւետեր. և անա մէկէն ի մէկ բնականաբար դուռը կարծես թէ ոտքի կ'ելաւ. և ճիւղաղբէ մէկը ձեռքը դաշոյն մը առած դէպ ի ինձ վազեց. վազեց ու եկաւ արձանի մը նման դէմս կանկ առաւ, պահ մը լռիկ մընչիկ կենալէ վերջը — ուն, հիմա քիչ մը ոգի առ ի — ըսելով կատուի նման մեմուաց և իսկոյն զլսոյն փեղոյրը ու կռնակին զրզլիկը մէկդի նետելով հայելիին առջեւ վազեց, ցնորեալի մը նման, մատերը գանգուր ի աղօտութիւն մը մագբորուն մէջ ոլորելով սկսաւ ընկրկուծեամբ գոչել յուսահատ — մի բոլորովին մարդկութենէ ելեր եմ. ինչ զարմանալի տեսարան ես ինքզինքս չեմ ճանչնար ասոր մէջ. հապա եթէ որ անի, ան այն սիրոյս թրուշնիկը ծակէ մը զիս դիտեր. արդեօք որպիսի անպատիւ ածականներով զիս պիտի պատուեր. — բարեկամ ես որ նոյն պահուն ապշուծեամբ աչքերս այս օտարականի վրայն ընկնէր կը դիտեի. արդեօք ով պիտի ըլլի այս տարաբար պատանին կրօնի մը տոմար. և անա մէկէն ի մէկ խելքս զլուխս մէջ եկաւ ու նստաւ. չըլլայ թէ այս օտարականը մեր Պ. Վաղարշն ըլլի ըսի, և իրօք այսպիսի միտումներ ըն-

լըն ալ աւելի ինձ հաւանական կը թուեր. քանզի քանի կերդար այս նորեկ օտարականին դէմքը ինձ կը ծանօթանար, իսկոյն երկու ոտքերս մէկ առած անոր քովը մօտիկնալու շարժում մ'ըրի, մէյնիս ինչ տեսնեմ. նոյն քնքն Պ. Վաղարշը. սակայն ինչպիսի դէմք, արեւագետ ծաղկի նման օրե օր իւր դէմքը կերպարանափոխ կըլլեր ու ինձ այնպէս կը ներկայանար:

— Հիւ Պ. Վաղարշ ինչու համար դուն քու դեմքիդ վրայ այդչափ կը դժգոհաս. ես այնպէս կը կարծեմ որ սիրունիդ երբ զքեզ այդ բնական անգարդ, և առնացի կերպարանքդ, նա մանաւանդ այդ թափառական կանխածքդ, որ հրապարակի է. եթէ իրօք կը սիրէ անձը և սիրտը քան նորածն հագունտը և օձանման փողոսկի ցուպ: Սիրահար մը որ իր սիրոյ հրեշտակին միշտ հագուած սգուած փեսայի պէս կերուի, երբեք ամուսնանալու միտք չունի. թող թէ քեզի նման չնաշխարհիկ պատանի մը. Պ. Վաղարշ կամացուկ մը սկսաւ ժպտիլ. մեղկիկ հայելիին հայլ և անոր մէջ շեղանի նայելով ըսաւ, — ան սիրելի Վահէ արեւու ճառագայթները համբուրեմ. գեթ դուն խօսէ յիրաւի գեղեցիկ չեմ. և չեմ կրնար քանի քանի օրիորդներու սիրտեր ևս ինձի գրաւեր. — հիւ ես Պ. Վաղարշ. ինչ ըսելէ օրիորդ բոլոր աշխարհ քեզի խոտարան թող ըլլին. — հիւ հիւ. կը տեսնեմ որ Պ. Վահէ զիս շատ կը սիրես. — այո՛ Պարոն. բայց շատ մի չոնտնար եկու քիչ մը քովս նստէ քեզի բաներ ունիմ հարցունելու. — Խօսէ և հարցու Պ. Վահէ. բայց չըլլայ թէ կրկին սիրտս թունտ հանես — ըսաւ ու դաշկիտակը դէպ ի աչքերուն մօտեցնելով հանդարտիկ մը քովս նստաւ. սակայն նոյն րոպէին Վաղարշի կապուտագոյն աչացը մէջ արտառը մը փրփրաց, վայրկեան մը լուռութենէ վերջը ըսի. — հիւ ես բարեկամդ Վաղարշ, ես կարծեցի որ հիմա է. Պոլիս հասար ու դեռ ինչուան հիմա հոս կը պլուրտիս. — ան սիրելի Վահէ, կեցի կեցի որ ըսեմ. այս գաղտնիք մ'է գորս չեմ կարող քեզմէ պահել, հազիւ թէ վայրկեան մը առաջ քեզմէ բաժնուեր, դէպ ի սիրունիս սրանալ որոշած էի, մէյնը նալ ինչ տեսնեմ. դիմացի լեռան

որ Սփնքոր կանուանեն մէկէն ի մէկ ձիւնախառն անձնի մը բռնուելով . ապառաժի մը տակ թրչած հաւու մը նման կզկտեցայ . յանկարծ քնոյ մը մրափն աչքերս պատեց ու սկսայ նիրհել . ան նիրհել չեմ գիտեր շատ թէ քիչ . երազ մ'ներ սկսաւ զիս ինչուան երկնի մամուշակազոյն կամարին վրայ բարձրացընել . սիրոյս զեղանի հրեշտակը դէմս եկաւ . եկաւ ու մէկէն ի մէկ վիզս պլլուեցաւ . ուրախութիւնես խելքս զուխէս մազ մնաց որ կը թռեր . բռնեցի ձեռքէն և իր մեղրածոր , շրթունքներէն վարդագոյն այտերէն և սիրոյ պարտեզէն համբոյր մը քաղեցի . արիւնս երակներովս մէջ սկսաւ շուրջ առնել նոյն պահուն կարծես առիւծ դարձայ , անթիւ գայլերու նման սկսաք ծծելուն ծայրը լեզուովս ծրծեի , կոպկոպման զինքը զգուել , և սովամահ անասնոյ մը նման կարօտութիւնես մարել . մարեցայ ոգի խակոյն գետին փռուեցայ . վայրկեան մը վերջը երբ նոր ոգի մը եկաւ վրաս . աչքս բացի և տեսայ անծանօթ մը դէմս կանգուն . յանկարծ մահուան տարտուռ մը պաշարեց զիս . ուզեցի դաշոյնով հարուած մը տալ ճակտին . և արիւնը եփրատայ նման գետին ցուլել . մէկէն ի մէկ աչքիս երկայն սուր մը շողաց ու սկսաւ դէպ ի ինձ մօտենալով գոչել . կեցի Պ . Վաղարշ , կեցի , եթէ ոչ արիւնաշախտիս դահճի մը նման կերեամք ու աչքին . ոտքի ել և ետևես եկու , — ուր պիտի երթանք ըսի չըսի և ահա ապտակ մընէր զխուս զարկաւ . զիս գետին փռեց ու սիրունիս ձեռքես յափըշտակելով աչքիս առաջէն անհետ ըրաւ . զոչեցի պօռացի բայց չաւաղ որ օգուտ մը չըրաւ , այս անծանօթ անձին ետևես վազելու միտում մը ըրի . և ահա ուրիշ մէկը թևես քաշելով դիակի մը նման կանկ առինք . զրպանէն չուան մը հանելով թևերս և ոտքերս կապեց ու կենդանի մարմինս շալակը առած զիս բաժրաշէն դռնէ մը ներս մղելով մէկէն ի մէկ աղօսւ և մօին աշտարակի մը մէջ գտայ ինքզինքս . հիվ երկինք այս ինչ անձրևէ զխոյն կը թափի ըսելով վայրկեան մը թևերս վեր առի նախախնամութեան մէկ օգնութիւնը խնդրելու . մէկէն ի մէկ այնպիսի մօին աշտարակի մէջ աշտարակի մը վրայ կան-

գուն ճրագի լոյս մը աչքին երեցաւ . փառք քեզ Տէր ողորմած ըսելու չմնաց , դրան մը բացուելուն հետ խառնի ճաղանճ բազմութիւն մը սկսաւ ներս թափիլ . ճիւղական խմբակ մը պիտի ըլլի ըսի մըտովի . եկան եկան ու սկսան աշտարակի չոյս կողմը դրուած ամոռներու վրայ շարուիլ ու շտկելիլ այսպիսի ցնորական տեսարանի մը մէջ սարսափմամբ աչքերս նորեկ օտարականաց վրայ սևեռելով դիտել սկսայ . ուզեցի հաշիւն առնել այս Կոթ կական խմբակին , ինչոյն այս խմբակին մէջ երկայնահասակ . ալևոր և զանազան տեղանք սատանայ մը տեսայ եւ որքան երկայն մօրոքսին թելերն բոժոժներ կախուած լինելուն նկատի ըլլի այս անձը . անշուշտ բոժոժաւոր սատանայ մը և այս ճիւղական խմբակին նախագահը . և իրօք ալ այնպէս էր , որովհետև այս բոժոժապատ անձը , զուխի երերցունելուն պէս ամէն մարդ իսկոյն համեստ լռութեամբ անոր առաջը կը խոնարհէր :

Բարեկամը

ՎԱՀԷ

Հետևեալ նամակը որ Ատաբազարի Ազգայիններէ կողմն ուղղուած է , առանց մեր կողմանէ դիտողութիւն մը ընելու այսպիսի տարօրինակ դէպքի մը ու վայրագ կղերի մը անպատումեանը վրայ . Ամենապատիւ Ս . Պատրիարք Հօր . և Ազգային Վարչութեան Մեծապատիւ Երեսփոխան Էփէնտիներուն ուշադրութեանը յանձնելով . այսօր արժան կը դատեմք ի հրատարակութիւն :

30 Մարտ Ատաբազար 1868

Սիրելի Բարեկամս,

Հետևեալ քանի մը տողերը յառաջիկայ առթիւ պատուական Էրիզայի միջոցաւ հրատարակելիդ ինքզինքն .

Նամակս գրելու բուն շարժառիթը ի գիր չ'արշձանացուցած , հարկ կ'համարիմ աւագ հինգշաբթի

գիշերուան Յիսուսի Քրիստոսի տեսողն մերոյ ջար-
ջարպիսց յիշատակութեան առթիւ գիշերային ժա-
մերգութեան ատենին անցած մանր պարագայ մը
կամ անցը մը յիշել: Ահա հաւաքակի. երբ ժամը
իբրիկուան մէկին ատենները ջերմեռանդն հասա-
րակութիւնը խուռն բազմութեամբ Ս. Եկեղեցին
դիմեց անշուշտ սա նպատակին համար էր որ նոյն
իբրիկուան կարդացուած գրոց ունկնդիր ըլլալու հա-
մար, երկու սրտաշարժ տեսարաններ տեսաւ բոլոր-
ովին մեկզմեկու հակառակ: Ասոնցմէ մեկը այն էր
որ նոյն եկեղեցւոց (Ս. Հրեշտակապետի) քահանա-
ներէն մին գրեթէ կրկին անգամ Յիսուսի Քրիս-
տոսի չարչարանաց հեղինակ կըլլար, վասնզի ան-
արժան քահանայն չեմ գիտեր քանի հօգիս օղի
փորը լեցուցած Սուրբ Աւետարանի պատմութիւն
կ'կարգար.: Երևակայեցէք անգամ մը Թէ՝
ժողովուրդը ինչ զգացում ունեցած է: Իսկ միու-
սը դարձեալ կղեր մը՝ Քրիստոսի չարչարանաց
կտակը կարգալով քիչ մը յառաջ գայնակեալ ժո-
ղովուրդ մը ի զհր կ'ընդունէր մաս մը ժողովուրդի
համար. ըստ որում ան նոյն քահանայն հազար ու
մեկ հայրոյնքով կամ լաւ ևս է ասել բանասարկու-
թեամբ ականջ չ'ընելու կ'հարկադրէր. աս այսչափ.
ապրին ամենն ալ:

Դանք հիմա բուն նամակի շարժառիթը գրելու:
Երեկ իբրիկուան Քրիստոսի Թաղման յիշատակու-
թեան տօնախմբութիւնը կատարուելուն մէջ ժամեր-
գութիւնը ընդհատելով՝ ըստ վաղեմի արտառոց
սովորութեան, եկեղեցւոյն բոլոր կահ կարասիները
յաճուիդ կ'հանէ տեղւոյն աւագ կղերը. բարեբաղ-
դաբար և կամ դուն ըսէ դժբաղդաբար, դուրսեցի
ազգայինը հոն գտնուելով խիստ կ'սրտնեղէին ըսելով
հոս Պոլսոյ Պիք բազարին չէ, հոս տուն Աստուծոյ
է, և Թէ Քրիստոս տաճարին մէջ պղտնի վաճա-
րողները խարաքանալ արտաքսեց և այլն. սակայն
որով որ քահանային դէմ խօսելը մահու-
չափ մեղք է.: Գիտեն մտիկ ընողները. վերջ
ջգայապէս յիշեալ դուրսեցի ազգայինները կ'պար-
տաւորին յետեւեալ երկուողիկը գրել և ուզել առ

մունետիկ քահանայն: Ահաւասիկ յիշեալ նամակին
պատճենը:

29 Մարտ. 1868.

Սրբալիօն Հայր,

Դուրսի գտնուած ախոռը՝ Քրիստոսի էօնն Սուրբ
իւլար՝ Սուրբ փալանը՝ Սուրբ նալը՝ եւ Սուրբ դաւա-
ղըն կեցած է, կաղաչեմք անոնք ալ չ'մոռնաք մէզաք
հաճելու:

Մեամբ նուազ

Քանի մը Հայեր

Այս նամակը մունետիկ քահանայն կարգալուն
պէս կայծակէ զերնուածի նման մէկէն արհեստը
փոխելով դարձեալ քահանայական արհեստը (իրենց
համար) ձեռք կ'առնէ. Թէ և վերջը քանի մը կտոր
բաներ ալ կ'ձախէ գաղղնի կերպիւ:

Պ. ՋԱՐՄԱՅԵՐ

Հետեւեալ բանաստեղծական յօդուածը որ Խա-
ղիւղի Ներսիսեան վարժարանի աշակերտներէն
Արգոյ Պ. Ռեթէոս. Յ. Պեր երեանը ազգասիրա-
կան ազգու եռանդով մը գրած և մեզ ուղղած է. մեր
ևս նորհակալութեամբ ընդունելէ և հրատարակելէ
զկնի. այսօր կը խոստովանմք հրապարակաւ. որ
եթէ ուրիշ որ և է դպրոցի աշակերտներէ ախպիսի
գրութիւններ ևս մեզ ուղղուելու ըլլայ. կրկին ան-
գամ սիրով կ'ընդունինք ի հրատարակութիւն:

ԱՅՅԵԼՈՒ ՅԱԻԲԵՐԱԿՍ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Գիշեր էր. մութը ամէն բան ծածկած էր. անհա-
մար քաղաքը լուսահիւս ոչ ոսկեմեղ օմոց մը երկ-
նից կապուտակ գաշտը կը ծածկէր: Լուսինը գի-
շերուան Թագուհին, լուիկ և համրաքայ ամպերուն
վրայէն կը սահէր, խաղաղ և լերպից ու հովտաց
վրայ տխուր ու աղքատ պայծառութիւն մը կը սփռէր:
Թաւ բան մը այս լեռնորդաւոր վայրաց լողմունք
վերգովէ վեր համարձակէր. մի միայն մարմ ընդ
մերձ գիշերային բուերու լողական նրագները կը

յուռէին . . . : Գիշեր էր . ամեն բան խոր քնոյ մէջ
 ծաղուած , բնութիւնն անգամ կը նընջէր . Էս միայն,
 Էս արթուն , ահ ընդ ահ կը թափառէի միայնակ
 Հայրենեացս աւերաճնաց մէջ , զիշերաշրջիկ ուրուա-
 կանի կամ այն աւերակաց ոգւոյն նման : Կը քալէի
 և ամեն կողմ մէյմէկ նոր ու տխուր առարկաներ
 աչացս կը ներկայանային : Հոս կը տեսնէի սրբա-
 վայր տաճարի մը աւերակները՝ որուն սրբազան
 կամարները հողոյ հաւասար եղած էին : Արդէն կը
 տեսնէի ոսկեճեղուն ու հոյակապ ապարանքներ կի-
 սակործան ու անշուք , որոց աւերակաց մէջ ան-
 գամ կը նշմարուէր տակաւին իրենց նախկին պեր-
 ճութիւնն ու մեծաշուք փառաշիրութիւնը : Ասդին
 տխուր ու սգապատ շիրիմներ , որոց մէջ զՀայաս-
 տան պանծացնող անմահ քաջազանց նուիրական
 անիւնները կը հանգչէին : Վերջապէս աչքս հր կողմ
 որ դարձնէի ամէն տեղ Հայաստանի պնծեալ փա-
 ռաց հետքերը կը նշմարէի . քամէն բան Հայաստա-
 նի նախնի փառքերն ու պերճութիւններն աչացս
 առջև կը նկարէր : Մահը քիարծեա , կը թագաւո-
 էր այս տեղերուս մէջ . այս սուրբ , բայց ահաբ-
 ռ վայրերը . որոնց մէջ այնչափ դարերու փառ-
 քեր և մեծութիւններ կը բնանային , մարդուս
 յատկապէս միանգամայն և սոսկուն կազդէին .
 տուրներս սկսած էին զողողալ . ուստի չի կրնալով
 լլկնա ընթացքս շարունակել , զացի և բլուրի մը
 լայնատայ : Հոն երկար ատեն խոր և անզգայ լը-
 ութեան մը մէջ ծաղուած , ձեռն ի ծնօտ , ար-
 դնկն ի ծունկ մտախոհ ու անջշունջ կեցած էի ,
 աչուրներէս լռիկ հոսած արտասուաց գետերը , ո-
 ռնք լուսինն արծաթափայլ ճանաչներովը կը
 լայլէին , գետինը կողողէին : Ետքը յանկարծ հոգ-
 ոյս խորէն սուր հառաչանք մ'արձակեցի և ար-
 աստաւոր աչուրներս երկինք վերցնելով , «նվ
 չրկինք , աղաղակեցի , որ սիրտ կրնայ հանդու-
 րեալ աշխարհի խղիղորում քեզարանի մը . հո , ինչ վի-
 յակի մէջ կը տեսնեմ զքեզ . ով սիրելի Հայրենիք
 ոմ , ով անձկալիղ իմ Հայաստան , դու քու փառ-
 քերէդ և պերճութիւններէդ մերկացած , ամայի և
 ոխուր անապատ մը դաճեր ես : Արևը , որ յառաջ

իր սկզբնածագ ճառագայթներովը քու երկնամասն
 և հրաշակաւորոյ տաճարացդ զրմբէթները կողջու-
 նէր , հիմա անոնց անեթակները միայն կը լուսաւո-
 րէ : Քու հոյակապ պալատներդ վայրենի զազա-
 նաց որջ եղած են . թռչունք որ յառաջ իրենց աշ-
 խոյժ և զուարթագին երգերովը քո անտառացդ ու
 դաշտերուդ կենդանութիւնն փոխային : հիմայ ,
 կարծես , ողբանուագ երգերով քու թռչունաւո-
 թիւններդ միայն կողբան : Երաժիշայ , եփրատայ ,
 Սղմուտի արտօնքովն անխնայ և Զեփիւրը
 մայրեաց տերևներուն մէջ՝ լալնգին ողբեր միայն կը
 հիւսեն . իսկ որդիքդ օտար աստղերիւ տալ օտա-
 րաց ճիրաններուն մէջ՝ կը հեծեն և կը հառաչեն :

Ո՞ր ես այն հսկայազօր իշուցազուններդ՝ որոնք
 զաշխարհ կը դողացնէին , զահեր կը սարսափէին և
 սոսկումն ու սարսափ կազդէին տիեզերաց : Ո՞հ , հոմ
 մարեց , Հայաստան քու փառացդ ջահը . հոմ քու
 բազդիդ արևը խնւարեցուց : Ո՞հ մենք քու հարա-
 զատ որդիներդ , միթէ քու անցեալ փառացդ յիշա-
 տակովը յաւիտենան մորմոքելու և մեր դառնահոս
 արտասուօքն օտար նե հողերը թրջելու դատա-
 պարտուած ենք» : Ըսի ու լռեցի , և լուծիւնը
 միայն իմ խօսքերուս կը պատասխանէր : Քայց քիչ
 մը վերջը դժուարատակ կնոջ կերպարանքով մէկը
 դիմացս արձնանցաւ . իւր հասակը բարձր , փա-
 փուկ ու շնորհալից էր , այլ այնքան վտիտ որ
 ստուերի մը նմանութիւնն ունէր : Ղեմքը գեղեցիկ
 և հրեշտակային , և թշուառութիւնը նոր փայլ մը
 յաւելցուցած կերևէր անոր դիմաց արդեանաւորութեանը :
 անոր վեհ ու լուծաշող ճակատը՝ անզոյն և օտա-
 կընճիւններով ծանրաբեռնեալ կերևէր , ինչպէս
 երբեմն թեթև ամպեր լուսինը կը սևասքօղեն . անոր
 կիսաթառամ այտից վրայ՝ արտասուած շիթեր
 կը փայլէին , վաթգին կաթմբերանգ թերթերուն
 վրայ շողացող մաքաբարտափայլ ցօղին խմայն : Տխուր
 մեղամաղձոտութիւն մը անոր դիմաց վրայ նկար-
 ուած կը տեսնուէր , և թախտութեան մոխր քօղ մը
 անոր աչաց փայլը նսեմացուցած էր : Մինչ հիպ-
 ցած ու զարմացած աչուրներս վեր վերցնել անգամ
 չէի համարձակեր , ահա անիկայ ծանր ու անոյշ

ձայնով մը « ո՛վ Հայկազն պատանի , ըսաւ ինծի ,
ինչ կը փնտռես դու այս լռիկ ու ամայի վայրաց
մէջ : « մխիթարումիւն » ըսի հստկտեալ ու դողդո-
ջուն ձայնօք մը , « կրնաս շնորհել ինձ զայն » :

— Ես ինքս կարօտ եմ սիրտանաց , ես ինքս , Ո-
գիս Հայապտանի , որ տխուր ու անմխիթար այս-
քան դարերէ ի վեր կը հեծեմ . ես որ միշտ այս ա-
ւերակաց մէջ թափառելով Հայաստանի աղէտները
կեղերերգեմ տխուր քնարաւս՝ որուն թելերը ժա-
մանակով ուրախութեան և հրճուանաց երգեր կը
հիւսէին : Ես թշուառս թմեն օր դառն արտասուե-
րերով այս աւերակները և շիրիմները կը թրջեմ , և
կսպասեմ մինչև որ զձած ձեռք մը հաճի այցելու-
թիւն ընել և հէք Հայաստանը թշուառութեան աղե-
տալի վիճէն դուրս հանել : Եւ ո՛վ կրնայ ըլլալ այդ
բարերար Զեռքը , այդ զձած հրեշտակը : — Դի-
տքիւն ու միտքիւն , պատասխանեց . գիտցի՛ր ,
որդեակ որ տգիտութիւնն ու անմիաբանութիւնը
այս երկու մարդախօշօշ ճիւղները Հայաստան ա-
ւերակաց կոյտ մը դարձուցին , և անոր փառաց
արեւը մարեցին , և գիտութիւնն ու միութիւնը կըր-
նան վերստին կանգնել Թորգոմայ փառաց կործան-
եալ գահը :

Այս ըսաւ և յանկարծ աչացաւ առջեւն անհետ
էղաւ . երազ մը թուեցաւ ինձ տեսածս , այլ դեռ
անոր վերջին խօսքերը ականջիս մէջ կը թնդային :

Սրտաբուլիս ու ջերմ համբոյր մը դրոշմեցի այն
նուիրական հողին վրայ , սրտագին ողջոյն մը նուիր-
եցի այն սրբազան դաշտաց ու լեռանց , և ծանր
բայերով սկսայ հեռանալ սփոփեալ և յուսալից :

ՌԵԹԵՈՍ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ի ՍԳՈՒԼԻ ՄԱՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԱՐՏԻԿ ԱՂԱՅԻ

Մահ տարածամ կորզեց ի բաց ,

Իբր զծաղիկ դեռաբոյս .

Փոսորեցան աչք մեր ի լաց

Բարեկամացդ հատան յոյս :

Զև անցեալ զբոյին կենաց ,
Դեռ ևս գարունք քսան և չորսք ,
Ի գարնանըդ տարածամ ,
Էր՝ ետուր դու զհրաժեշտ :

Ի գարնան ծլին ծաղկին ,
Վարդ և ծաղիկք քաղցրաբոյր .
Այլ բիւր աւաղ խաւարեցաւ
Զուարթ ծաղկիդ արշալոյս :

Ո՞, աղէ քեզ մերկացաւ ,
Ըզապառնոյդ սևասքող
Եւ ո՛ր ասաց երթ բարեաւ
Ունայնութիւն է այս աշխարհ :

Այս եղև պատգամ Վեհին .
Ում խոնարհին մահկանացուք .
Եւ ի յերկինս են անանց
Փաստից չքնաղ զուարթ՝ գարունք :

27 Մարտ. 1868. ի Դանաբ-գիւղ :

Ա Ձ Դ

Այսօր ցաւ ի սրտի կը ծանուցանեմք մերս Ար-
գոյ բաժանորդաց , որ ներողամիտ գտնուինք Էրի-
գայիս այսչափ ետ մնալուն . ինչպէս որ բնական
աշխարհին մէջ առանց պատճառի բան մը չըլլար ,
անշուշտ մեր այդ դանդաղութիւնն ալ պատճառ մը
ունի և որուն ինչ ըլլալն ալ , հետեւեալ թուով պարտ
կը համարիմք մերս Արգոյ ընթերցապէր ազգակնոց
հրապարակաւ ծանուցանել :

Խմբագիր-ՏՆՈՐԿԵՆ

Խ Ա Ձ Ի Կ Թ . Թ Է Ր Չ Ե Ա Ն

Առաջին արթ. բժշակական դպրոց

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Է Ն Ա Ր Ա Մ Ե Ա Ն

Կ. պօլիս, Ուզուն Զարեք Շէրիճ փաշա խան, քիւ 13